ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ
Միջազգային գիտական պարբերական
ISSN 2579-2822
Կայքէջ՝ anau.am/scientific-journal
doi:10.52276/25792822-2021.1-36

ՀՏԴ 631.111:711.14

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պ.Ս. Էֆենդյան *տեխ.գ.դ.*
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
Մ.Ա. Աբրահամյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
Կ.Ռ. Ներսիսյան
ՀՀ պետական կառավարման ակադեմիա
armgeoinform@mail.ru, abrahamyanmeri@mail.ru, kamo-nersisyan@mail.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝
հողեր,
տարածքներ,
որոշում,
մասնատվածություն,
հողերի փոխակերպում

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ուսումնասիրվել է 2005-2020 թթ. գյուղատնտեսական նշանակության հողերի փոփոխման դինամիկան: Նշված հողերի փոխակերպումը պայմանավորված է մի շարք օրենսդրական խնդիրներով, որոնք մինչ օրս լուծված չեն:

Ըստ հետազոտությունների՝ գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանը խոչընդոտում են գործող օրենսդրական դաշտը, դեգրադացման տարածումը, գյուղատնտեսական հողատեսքերի կազմում չօգտագործվող տարածությունների մեծ ծավալները և հողերի մասնատվածությունը: Նշված գործոնները չեզոքացնելու կամ դրանց ազդեցությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ և իրականացնել հողաշինարարական աշխատանքներ:

Նախաբան

Հայաստանում հողային պաշարների կառավարման բնագավառում դեռևս առկա են բազմաթիվ բացթողումներ, որոնք բացասական ազդեցություն են գործում հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման վրա: Մինչ օրս գոյություն չունի ներկա հողային հարաբերությունները համակարգող՝ հանրապետության հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմա: Ընդ որում՝ վերջին գլխավոր սխեման կազմվել է անցած դարի 80-ական թվականներին, երբ հողն ամբողջությամբ պետական սեփականություն էր: Հայաստանում հիմնական պատասխանատու մարմնի փոխարեն հողային պաշարների արդյունավետ կառավարմամբ և պահպանմամբ զբաղվում են տասնյակից ավելի նախարարություններ և գերատեսչություններ, ինչը հանգեցնում է անպատասխանատվության և համակարգային բացթողումների (Պ.Ս. Էֆենդյան, 2017): Բարդ և հակասական է նաև նորմատիվաիրավական բազան, ինչի հետևանքով հաճախ ծագում են տարաբնույթ հողային վեճեր: Հողային պաշարների կառավարման ենթակառուցվածքի բացակայությամբ պայմանավորված՝ բերրի հողերի հսկայական տարածքներ չեն մշակվում, ավելի քան 30 տարի հողատեսքերի ուսումնասիրություն չի իրականացվել:

Նյութը և մեթոդները

ՀՀ հողային հաշվեկշռում գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժինը վերջին 16 տարիներին ենթարկվել է զգալի փոփոխությունների (աղ. 1):

Աղյուսակ 1-ի համաձայն՝ 16 տարիների ընթացքում գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսները նվազել են 91,79 հազ. հեկտարով, այսինքն՝ յուրաքանչյուր տարի շրջանառությունից դուրս է եկել միջին հաշվով 5737 հա հող: Տոկոսային առումով գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժինը ՀՀ հողային հաշվեկշռում նվազել է 3,1 %-ով՝ 71,8-ից հասնելով 68,7 %:

Ըստ աղյուսակ 2-ի՝ պակասել են գյուղատնտեսական նշանակության, անտառային ֆոնդի և պահուստային հողերը, ավելացել հատուկ պահպանվող տարածքների հողերը: Եթե վերջիններիս տարածքներն ավելացել են արգելոցների, արգելավայրերի և ազգային պարկերի կազմում ընդգրկված անտառային հողերի հաշվին, ապա գյուղատնտեսական նշանակության հողերի փոփոխությունները կրում են այլ բնույթ:

2005-2020 թթ. վիճակագրական տվյալների վերլուծության համաձայն՝ հողերի կատեգորիաների փոփոխության արդյունքում պահուստային հողերի մեծ մասը դասվել է գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիային, որոնց մի մասը հետագայում վերափոխվել է բնակավայրերի, արդյունաբերական, ընդերքօգտագործման, այլ արտադրական նշանակության և հատուկ պահպանվող տարածքների հողերի:

Հարկ է նշել, որ անցած 16 տարիների ընթացքում պետության կողմից վարվող «հանքային» քաղաքականության հետևանքով գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվին արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքներն ավելացել են ավելի քան 1,8 անգամ: Ընդ որում՝ այդ միտումը շարունակվում է: Նույն կերպ «էներգետիկ» քաղաքականության իրականացման հետևանքով ավելացել են էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի մակերեսները, սակայն այս անգամ՝ ոչ միայն գյուղատնտեսական նշանակության, այլև անտառային և հատուկ պահպանվող տարածքների հողերի հաշվին: Հարկ է նշել, որ տվյալ դեպքում հողերի օտարումն իրականացվում է բացառապես փոքր հեկերի և դրանց ենթակառուցվածքների կառուցման համար:

Աղյուսակ 1. Գյուղատնտեսական հողերի մակերեսների փոփոխության դինամիկան 2005-2020 թթ.*

Տարիներ	Գյուղատնտեսական նշանակության հողեր						
	տարածքը, հազ. հա	ըստ ընդհանուր հողային ֆոնդի, %	այդ թվում				
			վարելահողեր, հազ. հա	բազմամյա տնկարկներ, հազ. հա	խոտհարքներ, հազ. հա	արոտներ, հազ. հա	այլ հողատեսքեր, հազ. հա
2005	2135,3	71,8	457,7	29	127,8	885,1	635,7
2006	2129,6	71,6	452,9	27,3	127,5	1125	396,9
2007	2122,1	71,3	452,1	29,6	127,5	1118,3	394,6
2008	2121,21	71,3	450,36	31,57	127,36	1117,14	394,78
2009	2120,31	71,3	449,41	32,56	127,35	1116,56	394,43
2010	2100,9	70,6	448,5	32,9	127,1	1104,3	388,1
2011	2077,0	69,8	449,2	33,0	128,3	1067,2	399,3
2012	2052,4	69	448,4	33,4	121,6	1056,3	392,7
2013	2051,0	69	448,2	33,3	121,8	1055,3	392,4
2014	2049,4	69,9	447,5	33,7	121,7	1054,2	392,3
2015	2045,7	68,8	446,7	34,4	121,1	1051,3	392,2
2016	2045,5	68,8	446,4	34,7	121,1	1051,3	392
2017	2043,8	68,7	446	34,8	121	1050,8	391,2
2018	2044,5	68,7	445,6	35,3	121	1051,6	391
2019	2044,2	68,7	444,8	36,4	121,1	1051,1	390,8
2020	2043,51	68,7	444	37,34	121,11	1050,54	390,52
2005-2020	-91,79	-3,1	-13,7	8,34	-6,69	165,44	-245,18

*Կազմվել է հեղինակների կողմից՝ ՀՀ հողային հաշվեկշռի ամենամյա տվյալների հիման վրա:

Աղյուսակ 2. ՀՀ հողային ֆոնդի փոփոխությունները 2005-2020 թթ.*

Հողեր	Տարածքը և տոկոսային հարաբերակցությունն ըստ տարիների		Փոփոխություններ (+, -)	
	2005 թ.	2020 թ.	հազ. հա	%
Գյուղատնտեսական նշանակության	2135/71,8	2043,51/68,7	-91,49	-3
Բնակավայրերի	133,9/ 4,5	151,94/5,1	18,04	0,6
Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	20,9/0,7	38,64/1,3	17,74	0,6
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	9,1/0,3	13,56/0,46	4,46	0,16
Հատուկ պահպանվող տարածքների	187,8/6,3	335,64/11,3	147,84	5
Հատուկ նշանակության	29,5/1	30,51/1	1,01	0
Անտառային	398/13,4	334,02/11,2	-63,98	-2,2
Ջրային	22,1/0,7	25,82/0,8	3,72	0,1
Պահուստային	37,7/1,3	0,62/0,02	-37,08	-1,28
Ընդհանուր նշանակության	2974,3	2974,3		

*Կազմվել է հեղինակների կողմից՝ ՀՀ հողային հաշվեկշռի ամենամյա տվյալների հիման վրա:

Արդյունքները և վերլուծությունը

Թեև ՀՀ հողային օրենսգրքից հանվել է այն կետը (հոդված 7, կետ 2), որի համաձայն՝ Կառավարությունը հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերի, պետական հաշվառման տվյալների հիման վրա սահմանում ու փոփոխում է հողերի նպատակային նշանակությունը (ՀՀ հողային օրենսգիրք, 2001), այնուամենայնիվ նույն օրենսգրքի այլ հոդվածների (հոդված 2, կետ 2) և Կառավարության համապատասխան որոշումների հիման վրա (օրինակ՝ ՀՀ կառավարության 2011 թ. ապրիլի 21-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի փոփոխելու մասին» 558-Ն որոշում), առանց հաշվի առնելու տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, իսկ առանձին դեպքերում՝ նախարարությունների կարծիքները, Կառավարությունը շարունակում է փոփոխության ենթարկել հողերի կատեգորիաները: Միաժամանակ նույն օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գյուղատնտեսական հողերը ենթակա են հատուկ պահպանության: Այդ հողերի փոխակերպումը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի թույլատրվում է բացառիկ դեպքերում, սակայն «բացառիկ դեպքերը» մինչ օրս սահմանված չեն, ինչի հետևանքով որոշումների ընդունումը կրում է կամայական բնույթ: Մյուս կողմից, մինչ օրս տնտեսավարող սուբյեկտների կողմից չեն կատարվում ՀՀ կառավարության 2011 թ. սեպտեմբերի 8-ի 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու» վերաբերյալ 2002 թ. սեպտեմբերի 19-ի 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թ. ապրիլի 12-ի 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու պահանջները, որոնց համաձայն՝ կառուցապատման կամ ընդերքօգտագործման աշխատանքներից առաջ անհրաժեշտ է կատարել հողի բերրի շերտի տեղափոխում և հաշվառում:

Քանի որ ՀՀ պետական մարմինների կողմից իրականացված քաղաքականությունը հանգեցնում է գյուղատնտեսական նշանակության հողատարածքների կրճատման, ուստի անհրաժեշտ է խստացնել գործող օրենսդրության որոշ պահանջներ: Օրինակ՝ գյուղատնտեսական հողերի բոլոր փոխակերպումները ոչ գյուղատնտեսական հողերի սահմանել ըստ օրենքի, համայնքներում կարևորագույն հարցերը լուծել ոչ թե տվյալ համայնքի ղեկավարի և ավագանու, այլ հանրաքվեի միջոցով, օգտակար հանածոների արդյունահանումը արգելել և հէկերի շահագործման ակտեր չընդունել, մինչև չիրականացվեն հողի բերրի շերտի տեղափոխման աշխատանքներ և այլն: Անհրաժեշտ է նաև արդիականացնել ՀՀ հողային օրենսգիրքը, ընդունել «Հողաշինարարության մասին», «Գյուղատնտեսական նշանակության հողերի բերրիության ապահովման (պահպանման) պետական կարգավորման մասին» օրենքներ և դրանցից բխող այլ ենթաօրենսդրական ակտեր: Կարևորվում է նաև ներկայումս գործող հողաշինարարության կազ-

մակերպման կարգի փոխարեն (ՀՀ կառավարության № 125-Ն որոշում, 2005) հողաշինարարության մասին օրենքի ընդունումը, որտեղ պետք է ամրագրված լինեն հողաշինարարության սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, հողաշինարարության իրականացման կարգը, հողաշինարարական փաստաթղթերի տեսակները, դրանց կազմման և հաստատման ընթացակարգերը (Պ.Ս. Էֆենդյան, 2010):

Գյուղատնտեսական հողերի ոչ արդյունավետ օգտագործումը, օրենսդրական չլուծված խնդիրներից բացի, պայմանավորված է նաև դեգրադացմամբ, որը կրում է հարաճուն բնույթ: Այսինքն, եթե անգամ կատարվում են հակաէրոզիոն, հակասողանքային, ագրոմելիորատիվ միջոցառումներ, ապա անհրաժեշտ արդյունք չեն ապահովում:

Գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվեկշռում մեծ ծավալ են կազմում չօգտագործվող հողերը, ինչը պայմանավորված է բնակչության արտագաղթով, գյուղացիական տնտեսությունների անմխիթար վիճակով, էրոզացված վարելահողերի տարածքների, 1 միավոր արտադրանքի հաշվով ծախսերի ավելացմամբ, ներդրումների բացակայությամբ, ցածր գներով, ստացված բերքի իրացման դժվարություններով և այլ գործոններով:

Հարկ է նշել, որ Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման խնդիրներից է նաև հողերի մասնատվածությունը: Հողերի սեփականաշնորհման հետևանքով ձևավորվել է 345,9 հազար գյուղացիական տնտեսություն, որոնցից յուրաքանչյուրին միջին հաշվով բաժին է ընկնում 0,72-2,54 հա տարածք՝ մեկը մյուսից մի քանի կիլոմետր հեռու գտնվող 2-4 հողակտորներով (ՀՀ 2014 թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները, ՀՀ ԱՎԾ, 2016 թ.):

Եզրակացություն

Պետությունը, կարևորելով պարենային անվտանգության ապահովումը, պետք է մշակի գյուղատնտեսական հողատեսքերից առավելագույն օգուտ ստանալու ծրագրային փաստաթուղթ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հողամասի բնական, տնտեսական և իրավական առանձնահատկությունները:

Հարկ է նշել, որ անկախության տարիներից ի վեր ոչ մի հողաշինարարական աշխատանք չի իրականացվել: Մինչ օրս անհրաժեշտ փաստաթղթերը կազմվում են համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերն առավելագույնս օտարելու նպատակով: Ընդ որում՝ փաստաթղթերում ամրագրված պարտավորությունները մնում են թղթի վրա:

Պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից յուրաքանչյուրին վերապահելով որոշակի իրավունքներ՝ պետությունը, ըստ էության, կորցրել է հողային պաշարների կառավարումը, ինչը պայմանավորված է համապատասխան օղակների աշխատանքը համակարգող մարմնի բացակայությամբ: Վերջիններիս աշխատանքը կարող է համակարգել պետական լիազորված մարմինը (օրինակ՝ հողային պաշարների պետական կոմիտեն կամ վարչապետին կից խորհուրդը): Հողային օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին մասի համաձայն՝ ՀՀ հողային պաշարների կառավարումն անմիջականորեն իրականացնում է Կառավարությունը: Մինչդեռ այս դրույթը կրում է դեկլարատիվ բնույթ, քանի որ հստակեցված չեն կառավարման մեթոդաբանությունը և սկզբունքները: Հարկ է նշել, որ Կառավարության առաջնահերթ խնդիրը երկրի հողային պաշարների արդյունավետ օգտագործման սկզբունքի վրա հիմնված երկարաժամկետ տնտեսական զարգացման մոդելի մշակումն է: Հողային պաշարների կառավարման արդյունավետ համակարգ ունեցող երկրների փորձի համաձայն՝ նման մոդել կարող է մշակել միայն հատուկ լիազորություններ ունեցող մարմինը: Մեր կարծիքով այդ մարմինը պետք է ստանձնի նաև ՀՀ հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի կազմումը և դրանով նախատեսված միջոցառումների վերահսկողությունը:

Այսպիսով՝ գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանը խոչընդոտում են գործող օրենսդրական դաշտը, դեգրադացման տարածումը, գյուղատնտեսական հողատեսքերի կազմում չօգտագործվող տարածությունների մեծ ծավալները և հողերի մասնատվածությունը: Նշված գործոնները չեզոքացնելու կամ դրանց ազդեցությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ և իրականացնել հողաշինարարական աշխատանքներ:

Գրականություն

1. Էֆենդյան Պ.Ս. Հողային պաշարների արդյունավետ կառավարման մի քանի հարցեր // Ագրոգիտություն. - Թիվ 1-2. - 2017. - Էջ 26-32:
2. Էֆենդյան Պ.Ս. Հողային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում // Ագրոգիտություն. - Թիվ 7-8. - 2010. - Էջ 308-312:
3. ՀՀ 2014 թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները, ՀՀ ԱՎԾ, 2016 թ.:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում հողաշինարարության կազմակերպման կարգը սահմանելու մասին» № 125-ն որոշում:
5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. ապրիլի 12-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու» վերաբերյալ № 286-Ն որոշում:

6. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք. - Եր., 2001:
7. Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռ, 2005-2020 թթ.:

Проблемы использования земель сельскохозяйственного назначения в Республике Армения

П.С. Эфендян
Национальный аграрный университет Армении

М.А. Абраамян
Национальный университет архитектуры и строительства Армении

К.Р. Нерсисян
Академия государственного управления РА

Ключевые слова: *земли, участки, решение, фрагментация, преобразование земель*

Аннотация. Изучена динамика изменения земель сельскохозяйственного назначения за 2005-2020 гг. Преобразование земель сельскохозяйственного назначения обусловлено различными законодательно не решенными проблемами.

Согласно исследованиям, препятствиями эффективного использования сельскохозяйственных земель являются действующее законодательное поле, распространение деградации, большие площади неиспользуемых земель в сельскохозяйственных угодьях и их фрагментация. Для нейтрализации или уменьшения воздействия отмеченных факторов необходимо осуществить законодательные изменения и произвести землеустроительные работы.

Issues of Agricultural Land Utilization in the Republic of Armenia

P.S. Efendyan
Armenian National Agrarian University

M.A. Abrahamyan
National University of Architecture and Construction of Armenia

K.R. Nersisyan
Public Administration Academy of the RA

Keywords: *soils, land areas, decree, land fragmentation, land transformation*

Abstract. The changing dynamics of agricultural lands throughout 2005-2020 has been investigated. Transformation of agricultural lands is related to various unresolved legislative issues.

According to the research results the efficient use of agricultural lands is interfered with the current legislative environment, degradation factor, huge amount of unused soils registered in the agricultural land assets and soil fragmentation. To eliminate the mentioned factors and to reduce their effect, it is necessary to make legislative changes and to implement land management activities.

Ընդունվել է՝ 12.02.2021 թ.
Գրախոսվել է՝ 22.02.2021 թ.